ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«07» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000083

Ձեռնարկողը՝ *Քաղաքացի Զավեն Օվսյան*
ք. Երևան, Ա.Բակունց 4/1

Գործունեությունը՝ ***Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց 10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000083

<<07>> 10 2020թ.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց 10 բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	Քաղաքացի Զավեն Օվսյան
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փ., թիվ 10 հասցեում քաղաքացի Զավեն Օվսյանի կողմից նախատեսվում է կառուցել ժամանակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 3330մ² ընդհանուր մակերեսով հողամասի վրա՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ խառը կառուցապատման:

Գործունեության նպատակն է՝ կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր, որը լինելու է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ տարածքի շրջակա կառույցներին և շրջակա բնակչության համար չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչընդոտ:

Նկարագրական մաս.

Ըստ ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության՝ տեղանքը հարթ է:

Կառուցապատման համար հատկացված տարածքի հողածածկը բնորոշվում է որպես լիցքեր՝ կազմված խճից, խճավազից, կավավազային լցոնումներից:

Տեղամասում մինչև 39մ խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել:

Գործունեության ենթակա տարածքը կառուցապատումից ազատ է, 1998մ² կառուցապատման մակերեսով:

Կառուցապատման համար նախատեսված հողամասը մի կողմով զուգահեռ է Մոնթե Մելքոնյան փողոցին, որտեղից նախատեսվում է բնակելի համալիր մուտքն ու ելքը, և գտնվում է փողոցից 14մ հեռավորության վրա:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրում նախատեսվում է 18 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկեր: Վերգետնյա հարկերից առաջին երկուսը նախատեսված են որպես հասարակական սպասարկման նշանակության տարածքներ, իսկ մյուս 16 հարկերը՝ բնակելի: Բնակելի հարկերից յուրաքանչյուրում նախատեսվում է թվով 13 բնակարան, ընդհանուր՝ 208 բնակարան:

Բնակարանների գումարային մակերեսը յուրաքանչյուր հարկում մոտ 1000մ² է:

Բնակելի շենքն ունի երկու աստիճանավանդակ, 4 վերելակ: Շքամուտքերը միջանցիկ են: Բնակելի հարկերի բարձրությունը 3.300մ է, իսկ առաջին երկու հարկերինը՝ 3.900մ: Շենքի առավելագույն բարձրությունը առաջին հարկի հատակի նիշից հաշված 64.60մ է:

Ստորգետնյա հարկերը ծառայելու են որպես ավտոկայանատեղի, նրանցից յուրաքանչյուրն ունի 1915մ² մակերես: Ավտոմեքենաների համար նախատեսված կայանատեղիի ընդհանուր թիվը կազմելու է 156:

Բնակելի համալիրի ջրամատակարարումն ու ջրհեռացումը իրականացվելու են համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ցանցին: Էլեկտրամատակարարումն ու գազաֆիկացումը կիրականացվեն ըստ էլեկտրամատակարարման և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի տեխնիկական պայմանների:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարության տևողությունը ծրագրավորվում է 39 ամիս՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինարարական աշխատանքներին մասնակցելու են 137 մարդ:

Աշխատողների կենցաղային պայմանները ապահովելու համար կտեղադրվեն բիոզուգարաններ:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ էքսկավատոր, աշտարակային կռունկ, բուլդոզեր-ամբարձիչ, բետոնատար մեքենա, բետոնախտացնող սարք, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կօգտագործվի ավազ, ցեմենտ, գաջ, խիճ, բետոն, քարե սալիկ և այլ շինարարական նյութեր:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրավորվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում կենցաղային աղբն է՝ 32058կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր: Շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբը, մոտ 40տ քաշով, անմիջապես բարձվելու է ավտոինքնաթափերն ու տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային

նպատակների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 5688.5մ³/շին.ժամ:

Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են շինարարական հրապարակին կից պարզարան (25մ³), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 28600մ³ ընդհանուր ծավալով հողային զանգված, որից 5720մ³-ը ժամանակավոր կուտակվելու և պահվելու է շինհրապարակում՝ հետլիցքի համար օգտագործելու նպատակով, իսկ մնացած 22880մ³-ը՝ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Նախատեսվող շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը պետք է բարեկարգվի և կանաչապատվի:

Կանաչապատման ընհանուր մակերեսը կազմելու է 1332մ²:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվելու է Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է կամ տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից, կամ ավտոցիստեռներով՝ նախապես կնքելով պայմանագիր: Ոռոգման հաշվարկային ջրապահանջը կկազմի 240մ³/տարի:

Գործունեության ենթակա տարածքում պատմամշակութային հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ժամանակավոր ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու շինաշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են մթնոլորտային օդի, հողի և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- ջրցանի կատարում՝ շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- շինհրապարակում թափոնների տարանջատում, աղբամանների տեղադրում,
- շինարարական տեխնիկայի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա, հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական ցուցանիշների պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարաության ընթացքում նախատեսվում է 1200000 դրամ:

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին և չի խոչընդոտելու շրջակա բնակչության վիզուալ տեսադաշտը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թաղապետարանը և այլ գերատեսչություններ: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Սեբաստիայի փող. 32 հասցեում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը՝ օրենքով սահմանված կարգով:
3. Կանաչապատումն իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն ներկայացված և հաստատված կանաչապատման նախագծի:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաները պարտադիր լվանալ և սահմանել երթեր ու ժամանակացույց:

7. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:
8. Պարսպատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:
9. Պահպանել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Զավեն Օվսյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց 10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան